

Կ Ա Ր Գ

ազգային վարկանիշի հաշվարկի համար ներկայացվող մրացաշարերի գրանցման և հաշվետվությունները ներկայացնելու

Հայաստանի շախմատային ֆեդերացիայի վարկանիշային հանձնաժողովը սույն թվականի դեկտեմբերի 1-ից սահմանել է ազգային վարկանիշի հաշվարկի համար ներկայացվող մրացաշարերի գրանցման և հաշվետվությունները ներկայացնելու հետևյալ կարգը:

1. Վարկանիշային մրցաշարը գրանցելու համար անհրաժեշտ է ոչ ուշ, քան 15 օրացուցային օր առաջ նախապես գրանցել մրցաշարը Հայաստանի շախմատային ֆեդերացիայի վարկանիշային հանձնաժողովում:
2. Գրանցելու համար անհրաժեշտ է Հայաստանի շախմատային ֆեդերացիայի վարկանիշային հանձնաժողովի էլեկտրոնային հասցեին (ia_vardapetyan@yahoo.com) ուղարկել լրացված Հայաստանի շախմատային ֆեդերացիայի պաշտոնական կայքում (<http://chessfed.am>) հրապարակված համապատասխան ձևը (Ձև 1՝ կցվում է):
3. Ազգային վարկանիշի հաշվարկով մրցաշարի ընթացքը պետք է արտացոլվի chess-results.com կայքում:
4. Մրցաշարի ավարտից հետո, 15 օրացուցային օրվա ընթացքում, անհրաժեշտ է Հայաստանի շախմատային ֆեդերացիայի վարկանիշային հանձնաժողովի էլեկտրոնային հասցեյին ուղարկել.
 - մրցաշարի swiss-manager ծրագրի ֆայլը;
 - վարկանիշային ցուցակում դեռ չընդգրկված շախմատիստների անձնական տվյալները (Ձև 2՝ կցվում է):
5. Եթե մրցաշարը չի ընդգրկված Հայաստանի շախմատային ֆեդերացիայի պաշտոնական օրացույցում, ապա, մրցաշարի հաշվետվության հետ նույն ժամկետներում, պետք է ուղարկվի նաև մրցաշարի հաշվարկի վճարը:
6. Ազգային վարկանիշներն ամփոփվելու և հրապարակվելու են Հայաստանի շախմատային ֆեդերացիայի կայքում տարին 3 անգամ՝ առ 1-ը հունվարի, առ 1-ը մայիսի և առ 1-ը սեպտեմբերի դրությամբ:

Հայաստանի շախմատային ֆեդերացիայի
Նախագայի տեղակալ,
վարկանիշային հանձնաժողովի նախագահ՝



Ա. Վարդապետյան